րող էք, ուրեմն խնդրեմ Երևանի նուիրատուաց ցուցակի շարունակութիւնը տպագրէք ձեր պատուական լրագրի էջերում, որոնցից հազիւ կարողացայ ժողովել տասն և իննը րուբլի իննսուն կոպէկ, (19 ր. 90 կ.) փօստայի ծախսը իմ սեպհականութիւնիցը տալով։ Ահա նուիրատուաց անունները։

Տիկին Սոփիա Տէրունեանց 2 ր., Տ. Տէրունեանց 3 ր., Տ. կատարինէ Մարգարեանց 1 ր., Տ Աննա Սոնթրոսեանց 1 ր., Տ Շահնազարեանց 50 կ., Տ. Նոհիմի Մուշեղեանց 50 կ., Տ. Սոֆիա Դաղամեանց 1 ր., Տ. խանում Արծրունի 1 ր., Տ. Հուրի խանում Աբրահամով 50 կ., Տիկին Ասլիխան խուդավերդով 3 ր., Վասիլ Մկրտիչեանց 15 կ., Տ. կատարինէ Գեղամեանց 1 ր., Տ. Թագուհի Աստուածատուրով 1 ր., Տ. Թագուհի Տէր-Աստվածատուրով 1 ր., Տ. Սոնա Ցօնանով 15 կ., Տ. Ալմաստ Տէր-Աստուածատուրով 10 կ., Տ. Սալոմէ Գեղամեանց 2 ր., Աննա Գեղամեանց 1 ր.։ Գումարն է 19 ր. 90 կ.։

Մարգարիտ Գեղամեան-խանազատեան

ՆԱՄԱԿ ՊԵՏՐՕՎՍԿԻՑ

—

6 Մայիսի

Պետրօվսկի տիկիններից ժողովեցի յօգուտ Վանի հայ սովատանջների 95 ր. 30 կ., մի քանի պարոններից ևս ժողովված է 14 ր. 40 կ., բոլոր գումարն է 109 ր. 70 կ., փողը ուղարկում եմ այս նամակիս հետ, խնդրեմ հասցնել ուր հարկն է և նուիրատուների ազգանունները տպագրել ձեր լրագրում։

Տիկիններ՝ Նատալիա Յարութիւնեան 10 ր., Եղիսաբէթ Օվանեան 10 ր., կատարինէ Կօստանեան 10 ր., Մարիամ Յովակիմեան 10 ր., Գայանէ Տուրփայեան 10 ր., Մարիամ Վարդանեան 3 ր., Հռիփսիմէ Օսմանցեան 1 ր., Օվսանայ Սափարեան 1 ր., Մարիամ Տէր-Յարութիւնեան 1 ր., Աննայ Աթանեսեան 1 ր., Софья Ильашелько 1 ր., Շուշան Ազարէգեան 1 ր., Վարվարայ Խիթարեան 1 ր., Հռիփսիմէ Խիթարեան 1 ր., Նունիայ և Մարիամ Ցօղասափեանց 3 ր., Թագուհի Պէպինեան 2 ր., Հռիփսիմէ Ասլանեան 1 ր., Елена Теръ-Оганова 3 ր., Հռիփսիմէ Ազբարեան 1 ր., Հռիփսիմէ Տէր-Մելքիսեդեկեան 3 ր., Խօսրեվ Գուլազեան 1 ր., Вѣра Николаева 1 ր., Մարթայ Բաղդադեան 3 ր., Մարիամ Պեպինեան 50 կ., Ջանբազ Միրզաբէգեան 60 կ., Զարվարդ Գէօրգեան 60 կ., Եղիսաբէթ Յակովբեան 60 կ., Սօփիայ Յակովբեան 1 ր., Вильгельмина Симеонова 1 ր., Եւգենեայ Ասլանեան 1 ր., Մարիամ Եարալեան 1 ր., Татьяна Ергина 1 ր., Ольга Курдюкова 3 ր., Ксенія Михайлова 1 ր., Մանանէ Յակովբեան 50 կ., Վառվառա Յարութիւնեան 50 կ., Աննա Սարգիսեան 50 կ., Հռիփսիմէ Մարգարեան 50 կ., Анна Палитовская 1 ր., (Դարիայ Միքայիլովայ) Дарья Михайлова 2 ր.։ Պարոններ. Իսայ Յակովբեան 1 ր., Աւագ Մուրադեան 4 ր., Ալեքսան Ղուկասեան 1 ր., Գէորգ Յարութիւնեան 40 կ., Աւրիբաբա Արզումանեան 1 ր., Համբարձում Բաղդասարեան 1 ր., Աղաջան Միրզայեան 1 ր., Առաքել Թայիրեան 1 ր., Դանիէլ Աստուածատուրեան 1 ր., Եղիազար Առաքելեան 1 ր., Մարուգայ Առաքելեան 50 կ., Հայրապետ Յովանէսեան 50 կ., Դաւիթ Մանջիղլաձէ (վրացի) 1 ր.։ Ընդհանուր գումարն է 109 ր. 70 կ., այս գումարից վերէ արած փօստի ծախսը 70 կ.։ Մնացած մի հարիւր իննը րուբլին ուղարկում եմ ձեզ։

Տիկին Մարիամ Յովակիմեանց

ՆԱՄԱԿ ՍԱԼԵԱՆԻՑ

—

5 յունիսի

Այս տարի Լենքօրանի և Ջաւատի գաւառներում առատ և արդիւնաւոր հացի ցանքեր կան, և հունձը արդէն սկսված է։ Բայց որպէս նախորդ նամակներումս յիշած էի, թէ սալեանցիների և կամ նրա շրջակայ գիւղացիների Մուղան դաշտի վրա ունեցած մեծաքանակ հացի ցանքերին Կուր գետի ներկայ տարվայ յորդանալուց վտանգ է սպառնում,—այդ գուշակութիւնը՝ նախապաշարված մուսուլմանների անհոգութեան պատճառաւ արդէն իրագործված է, և նրանց ցանքերի երեք բաժնից երկու բաժինը զոհվեց անցեալ մայիս ամսում Կուր գետի հեղեղներին։ Ասում են որ հեղեղին զոհված ընդհանուր վնասի քանակութիւնը կը հասնի ոչ պակաս 10.000 Թաղար պտղի, այսինքն 250.000 պուդ։ Ցանքատէր մուսուլմաններին անցեալ մարտ ամսից յորդորումէին, թէ վնասակար վտանգի առաջն առնելու համար, կանխագոյն հարկաւոր է իւրաքանչիւր ցանքատէրի քսակից մի աննշան գումար ծախսել, և Կուր գետի եզերքը պատնէշներով փակել, ի հարկէ, միայն այն տեղերը, որ կողմից սպառնում էր վտանգը։ Բայց այս նախազգուշութիւնը ոչ ոք ուշադրութեան արժանի չը համարեց. մահմետականները պատասխանեցին, թէ որ բարձրեալ Ալլահը չը բարեհաճի իրանց արտերը վտանգի և փորձանաց ենթարկել, ոչ թէ Կուր գետի ջրերը, այլ և ովկիանոսի նման ծովերն անգամ չեն համարձակվի ո՛ և իցէ վտանգ և վնասներ տալու և թէ այդպիսի վնասակար պատահմունքները, մուսուլմանների կարծիքով, իբրև մեղաց փոխարէն և հատուցում սահմանված են վերին Նախախնամութիւնից, և թէ Աստուծոյ տնօրէնութեամբ առաջ եկող պատիժների դէմ, մարդկային հնարքներ գործածելը, այդ նշանակում է մարտնչել Աստուծոյն սուրբ կամքի դէմ։

Մուսուլմանների այդ նախապաշարմունքը և իրանց հոգսը Աստուծոյ խնամատարութեան վրա թողուլը, տեղոյս ոստիկանութեան կառավարիչ պ. Ջապլինն տեսնելով, իսկոյն պատուիրեց բոլոր գիւղապետներին իւրաքանչիւր գիւղից բաւականաչափ գործող մշակներ ուղարկել Մուղան, որոնք աշխատելով Կուր գետի եզերքի մօտ հողակուտակով և տախտակով ցանկապատ կապելին, և այսպիսով յաջողվեց ազատել մնացած ցանքերը. գուցէ այդ փոքր ի շատէ կազատէ նրանց բոլորովին քաղցած մնալուց։

Ց. Իւզբաշեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

—

Մարկիզ Սալսբըրին ասաց. վախենում եմ թէ այն մութ գոյները, որով այն ազնիւ Լորդը, որ ետևս նստած է, նկարեց Փոքր Ասիոյ վիճակը, իրաց ներկայ վիճակին չը համապատասխանեն։ Դժուար բան է չափազանց մեծացնել այն պատասխանատւութիւնը, որ կրկնակի կերպով բարձված է Թիւրքաց կառավարութեան վրա նրա անհոգութեան պատճառով թէ իր հպատակների և թէ իր շահերի նկատմամբ։ Բայց ասենք թէ այդպէս էլ լինի, այնուամենայնիւ չեմ կարծում, թէ մի որ և է լուծման մօտացած կը լինենք։ Ասված է թէ Անգլիայի օրէնքի համեմատ մի յանցանք չը կայ, որ չունենայ իր դարմանը։ Սակայն ափսոս որ Տաճկաստանում այսպէս չէ։ Անտարակոյս՝ այն քայլը, որի մասին հանդէպի ազնիւ Լորդը ասում է թէ արել է, կատարելապէս կանոնաւոր է և դա միայն կարելի է. դա մի այնպիսի քայլ է, որին կը հետևեն կարեկցութեամբ և յօժարութեամբ այն ամենքը, որոնք Օսմանեան տէրութեան ժողովրդի թշուառ վիճակը գիտեն և նրանց երջանկութիւնը կը փափագեն, բայց թէ դա մի շատ զօրաւոր քայլ կը լինէր, ապագայում միայն կարելի է ասել։ Ես չեմ խօսում այն բանի մասին, թէ մեծ տէրութիւնները մինչև ո՞ր աստիճան են անկեղծ Թիւրքաց կայսրութեան բարւոքումը պահանջելում. բայց այս կէտն էլ բոլորովին մէկ կողմ դնելով, մնում է այն խնդիրը թէ մենք ի՞նչ ոյժ ունենք Թիւրքաց կայսրութիւնը ստիպելու, որ նա Փոքր-Ասիոյ գործերի մէջ բարենորոգութիւնք մտցնէ։ Ունի՞ Թիւրքաց կառավարութիւնը այն միջոցները—եթէ կամք էլ ունենար—այդ նորոգմունքը մտցնելու։ Դրամ ունի՞։ Մարդիկ ունի՞։ Քաղաքական փորձառութիւն ունի՞։ Եւ եթէ այս ամենն էլ ունենար, կա՞յ արդեօք սուլթանի վարմունքի մէջ, որի (սուլթանի) մէջ ամփոփված են բոլոր իշխանական ոյժերը և որի վրա բարձված է թէ պատմութեան և թէ բոլոր աշխարհի առաջ այս ամեն անհոգութեանց և զեղծմանց պատասխանատւութիւնը,—ասում եմ, կա՞յ արդեօք նրա անցեալ վարմունքի մէջ մի այնպիսի նշան, որ կարելի լինի հաւատալ, թէ իր ասիական գաւառների մէջ բարենորոգութիւններ մտցնելը մի այնպիսի առարկայ է նրա աչքի առաջին, որ նա կը նուիրէր իր անձը կամ թէ որի համար նա կը զոհէր այն անձնական իշխանութիւնը, որը մինչև ցարդ նա մեծ հոգատարութեամբ բանել պահե՞լ է։

Ես կարծում եմ թէ ճիշտը նա է, որ այն վեց մեծ տէրութիւնները իրանց այլազան նպատակներովն ու հակադիր շահերովը երբէք դեռ չեն կարողացել և չեն էլ կարող միանալ այդ երկիրը (Տաճկաստանը) կառավարելու։ Նոյն իսկ եթէ նրանք համաձայն էլ լինէին, ես դարձեալ կը կասկածեմ թէ նրանք կարողանային ստիպել Թիւրքաց կառավարութեանը բարենորոգութիւններ մտցնել, բարենորոգութիւններ, որոնք իւրաքանչիւր Թիւրքի աչքին երևում են իբրև ինքնասպանութիւն։ Սա մի տխուր ապագայ է տխուր հայեցվածքով։ Բայց գուցէ կասեն. ապա ուրեմն

մի երկու փարայ հազիւ ձեռքերնիս կանցնի, ան ալ հացի կը տանինք, հաց չեն տար, այս Սարի Մէհէմէտը ինչ թուրք է...» այսպէս ըսելով արտասուքը կը քամեն և տունը հաց սպասող մանչ տղաններու պարէնը հայթայթել չը կարելով, անորոշ դրութեան և աղէկտուր խորհրդոյ անել լաբիւրինթոսի մէջ կը հրճրճին։

Օր մը ծուլութիւնը թօթուելով փառն դուան գնացի, ահա վերը յիշած Սարի Մէհմէտը ստուար մահակն ձեռքը առած, նօրէն տաճկաց հաց տըրւելու հրամանը՝ կը փոխէր բարձր ձայնով. ահա խչօյեան Սիմօն անուն անձ մը իւր զաւակները անօթութեամբ մեռնելէ ազատելու համար, երբ յիշեալ պաշտօնական անձին մօտեցաւ և հաց տալ կը խնդրէր, մահակով գլխուն պատասխանեց. «Օմէթ Միւհմէտա վէրըլսուն սօնրա»։ Երբ Սիմօնն կուզէ յառաջ երթալ, ահա այն դժուարաբեկ ըստուար մահակն Սիմօնի գլխու վրա ջախջախվեցաւ, և միայն սա բառերը կըսէր «սպաննես, մինչև հաց չը տաս, չեմ երթար», բայց դարձեալ դադարկաձեռն ետ դարձաւ։ Ահա ասկէ ետև ամէն օր չարունակ հայ ծեծելը եղաւ սովորութիւն. ոստիկաններն (որոնք բոլոր հայ մորթողներ են և կողոպտող քիչ բացառութեամբ) իրենց գլխաւորէն խրախուսեալ և չարութեամբ ոգևորեալ, եկ նայէ ինչ տաղտկալի վիճակի կենթարկեն գեղերը, որ քարացեալ սիրտ ունեցող մարդն ալ կը ցաւակցի, բայց ինչ. այս ոստիկաններն այնպիսի գազան մը և իւրեանց օրէնքէն խրատեալ, որք հայոց միսուտելը գերազանց կը դասեն քան զամէնն, և ահա հայոց համար վիճակվեցաւ որ 15 անձինքէ բաղկացեալ գերդաստանին միայն 6 ֆունտ հաց տրուի, և ահա ֆունտը եղաւ 9 կօպէկ, կառավարիչն ինքն փառն ընկեր գտնուելու համար։

Սովն վերջին աստիճան սաստկացաւ, ալ մէկ մարդ կարող չէ տանել և տոկալ այս տաժանելի լծոն տակ։ Կը նայես որ մէկ կողմանէ սովի անգութ ճանկերուն մէջ ճնշուելով և միւս կողմանէ տաճկաց բռնութեան և հարստահարութեանց ժանիքներուն մէջ բզքտուելով, կը սպասի հայը. մէկ մը երևակայէ Բայազէթի զառիվայր ճանապարհների վրա և չուկաներու մէջ, մօր շուրջը պար առեալ՝ դէմքը գունատեալ՝ ոտաց սրունքը մի մատ հաստութեամբ հազիւ կը քայլափոխէ, աչքերը լուսէն աղօտացած մանուկներն հաց հաց կաղաղակեն. մէկ մը երևակայէ, պատի տակը պարկած անհայր, անմայր, որբնայրի, մերկ մանուկներ և աղջիկները, մէկ մը աչքերն կը բանան, մէկ մ'ալ կը գոցեն, ահա հոգեվարքի մէջ են. մէկ մը երևակայէ միւս կողմը կը նայես՝ երեք չորս մանր եղբարք և չափահաս տղաք՝ ահա ընդարմացած են և մէկ ալ կողմը հետաքրքրութեամբ և աղէխարշ հոգւով նայէ մի քանիսին նստած կրակի մը բոլոր՝ ոչխարենին ձեռքերնին, մի երկուսն բուրդն կը քաշեն և միւսներն մերկ մորթն կրակի վրայ տաքցնելով կուտեն, և եթէ ուրիշ ուզող ալ մնի, կը գլանան, քանզի սատկած ոչխարի, իշի և այլ կենդանեաց դիերն չեն գտնուիր, որ դէթ անոնցմով ապրէին, ինչպէս որ առաջ կուտէին։ Եւ մէկ օր ես ինքս անձամբ կայնած երբ մորթուած գոմէշի մը ծախուիլը կը նկատէի, ահա անհամար տղայոց ամբոխ մը. գոմէշի շուրջն պար առեալ՝ աղիքներն և արիւնն ճանկելով կը փախցընէին, և երկուսն ալ կտրուած եղջերուաց բնի վրայ գտնուած երկու մատ հաստութեամբ կաշին քերթելով՝ մուխը դուրս տուող ծխնելոյզներու վրայ տաքցնելով, կուլ կուտային։ Այսպէս հիմա Բայազէթցին սովի անուոյ տակ հեծելով 50-ի չափ անձինք զոհ տուաւ, միւսն ալ յուսահատ կապրի, զինքն գերեզմանի շուրջը նկատելով։

Ասկէ երկու ամիս առաջ, կ. Պօլսոյ կեդրոնական ժողովոյ յանձնաժմբի կողմէն 300 օսմանեան լիրա հասաւ Բայազիտոյ և 7 գիւղօրէից համար, որոյ բաշխումը եղաւ 1200 թշուառ սովելոց. ինչ պիտի ընէ, դգալ մի ջուրն այս ծովին, սակայն այս ալ միջոց եղաւ շատ անձերուն սովի անարի և անգութ ճիրաններէն ճողոպրման։

Ասոր վրայ հայերից մի մասն աղերսագրերով կառավարչէն ցորեն խնդրելու գնացին. կառավարիչն և նա մանաւանդ ատենի տաճիկ անդամներն չար նախանձայուզութեամբ, պատասխանեցին թէ «գնացէք. ցորեն չը կայ, ձեզ ստակ ուղարկողն ցորեն ալ կուղարկէ», քանի որ տաճկաց լիուլի կը տրուէր, բայց հայոց համար ամեն բան չիք է, և այս մոլեռանդ պատասխանէն զկնի, տեղւոյս համարակալ Վէֆա էֆէնդին կրօնամոլութեամբ բորբոքեալ՝ կառավարչին հրաւիրեց ըսելով «թող այս հայերն (նախատական անուն համարելով) իրենց կամքովը թալլենք՝ ֆունտ հացը 30 կօպէկ ատոնց ուտեցնելով»։ Երբ տեղւոյս պատժական ատենի նախագահ կարնեցի Տ. Մկրտչեան վսեմաշուք Գալուստ էֆէնդին դէմ դրաւ, յիշեալ Վէֆա էֆէնդին, Գալուստ էֆէնդու վրայ յարձակեցաւ, բայց վերջինս տէրութեան արդար և անգործադրելի օրինաց տեղեակ լինելով, պապանձեցուց, և Վէֆա էֆէնդին ալ կրօնական չար հոգւով ոխակալեալ, հայոց վրայ աններելի չարիք տեղալ կը խոստանայ, և հետզհետէ կը տեղայ, և հայերի ձայնն ալ բնաւ չը լսուիր, քանզի թէ որ բողոք մը ալ ընես «հայը միւսլիմանին համար է ստեղծուած» կըսեն։

Բայազէթցին այսպէս անօթութեան լծի տակը ճնշուելէն զկնի, կը նայէ որ իւր կեանքը վտանգի մէջ է, իւր ինչքը և ստացուածքը իրենը չէ. բոլորն յանապահովի է, քանզի այն մեզ սպանողներն, մեզ մորթողներն և մեզ տեսակ տեսակ չարեաց խաղալիք ընողներն՝ բոլորն պաշտօնի անցած, հայու գլխին սպառնալեաց կայծեր կը թափեն, և միւս կողմէն ասպատակ կազմեալ ճանապարհներն կտրած են, որով հայու համար դուրս ելլելը անհնարին է, քանզի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ թուրք կառավարութեան քըրդաց տուած մարթէնի, հէնրի և այլ տեսակ ասեղնեայ հրացաններով վառեալ ալ պայազէթցու հայի ապրելը անհնարին է անհնարին. քանզի հակառակ սոցա եթէ հայու ձեռք հրացան մը տեսնուի, իսկոյն կառնուի ոստիկանի միջոցաւ, առ որ տեղւոյս հայ-հասարակութիւնը միշտ կըսէ. «արդեօք այս է որ մեզ կըսէին պիտի ազատուիք. ազատուելն այսպէս կըլլայ՝ որ մեզ մորթողն մեզ դատաւոր, միանգամայն և դատախազ կըլլայ. այս է, որ մեզ կըսէին մի՛ գաղթէք, ձեր ապագան լաւ կը լինի, և կը բարւոքուիք, ձեր կեանքը կապահովի, ձեր իրաւունքը կը պաշտպանուի, այս է այդ խոստումներու կատարումը, որ ալ աւելի վտանգաւոր վիճակի ենթարկուեցանք. քանի՛ քանի՛ անգամ գրեցինք ի պատրիարքարանն, ի կարնոյ առաջնորդարան, տասն անգամին հազիւ մէկ անգամ կը պատասխանեն թէ «լաւ կը լինի». այս է մեր լաւ լինելն, «լաւ կը լինի», յոյսով պիտի ապրինք՝ այս ճիրաններու մէջ, լաւ կը լինի որ գաղթենք. այս ինչ օր է մեր օրը, մեռնիլն հազար քիսա կարժէ և այլն...»

Այս օրերս գիւղացի հայերն կառավարութեան դիմեցին, որ ցանելու սերմ շնորհէ. առանց կարեկցելու բացասական պատասխան տուաւ, այլ հակառակ սորա, քիւրտ մարազգեաց՝ որոնք երկրագործութիւնը ինչ է չեն գիտեր, առատաբաշխ ասոնց կը տրուի, ասոնք ալ կառնուն ոչ թէ ցանելու, այլ ուտեն և ոգի առնուն, քանի որ ճանապարհներն կտրելու և կարաւաններն ցրուելու և յափշտակելու ժամանակը մօտեցած է, և թող հայը անօթի մեռնի, որու հոգն է։

Այսու ամենայնիւ Բայազէթի դրութիւնն և վիճակը շատ դժուար է. բայազէթցին թշուառութեան յետին աստիճանի վերջին կէտին մէջն է, բայազէթցին ապրելու յոյսն ալ թօթվեց, թէ որ մէկ մօտալուտ ձեռնտուութիւն և օգնութիւն և կարեկցութիւն չը լինի իւր ազգայնոցմէ, ալ բանը բանէն անցաւ։

Աւելորդ չեմ համարում ծանուցանել, իւղի ֆունտը 1 րուբլ, ցորենի ֆունտը 25 կ., մսին 15 կ., ձէթին 80 կ., ձուի հատը 5 կ., չամիչի ֆունտը 33 կ., չրին 33 կ., շաքարին 60 կոպէկ է և այս ալ հազիւ կը գտնուի։

16 մայիս. Գարոյր Հայկունի